ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2294-Ա « 20 » հունիսի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ Հ.47 ՇԵՆՔԻ Հ.41-42՝ 110,27ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Հրանտ Սիրեկանի Բազեյանի, Ալինա Գուրգենի Վարդանյանի և Անժելա Հրանտի Բազեյանի դիմումը Մ. Խորենացու փողոցի հ.47 շենքի, հ.41-42՝ 110,27 քմ մակերեսով բնակարանը մասնավորեցնելու մասին:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 26-ի հ.50-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետը.

1.Երևան համայնքի սեփականություն համարվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 19.06.2023թ. հ.19062023-01-0308 վկայական) Մ. Խորենացու փողոցի հ.47 շենքի հ.41-42՝ 110,27 քմ մակերեսով բնակարանը նվիրել նույն բնակարանի բնակիչներ՝ Հրանտ Սիրեկանի Բազեյանին, Ալինա Գուրգենի Վարդանյանին և Անժելա Հրանտի Բազեյանին (3 անձ, այսուհետ նվիրառուներ)՝ որպես սեփականություն:

2.Լիազորել Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանին՝ Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, նվիրառուների հետ կնքել բնակարանի նվիրատվության մասին պայմանագիր:

3.Ընդունել ի գիտություն, որ նվիրատվության մասին պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցման և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են նվիրառուների կողմից:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին՝ կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ՝ Ա. Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ